ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/234 «03» 07 2026 թ.

<<Ալեռտո>> ՍՊ ընկերության տնօրեն
Ս. Բաղդասարյանին
(ՀՎՀՀ 02686862)
Հասցե՝ Ք.Երևան, Մխիթար Հերացի 14/3
Էլ. հասցե՝ info@alerto.am
Հեռ.՝ +37498282938

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «Ալեռտո» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 29 ապրիլի 2026 թվականին կնքված «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Լ-34-3» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը պարտավոր էր մատակարարել՝

- 4-րդ չափաբաժնով՝ ակուստիկ սարք (3,750,000 (երեք միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով):

«Ալեռտո» ՍՊ ընկերության կողմից ստացվել է գրություն, ըստ որի վերջինս հրաժարվում է մատակարարել Պայմանագրի 4-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 4-րդ ենթակետի այն է՝ «պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պայմանագրով սահմանվում են տույժեր և տուգանքներ: Տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի մասնակի լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարության և «Ալեռտո» ՍՊ ընկերության միջև կնքված թիվ «ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Լ-34-3» ծածկագրով գնման Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի մասնակի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Ընկերությանը տրվում է 5 օրացուցային օր սահմանված տուգանքը 0.5% (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ 18,750 (տասնութ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամը վճարելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության 900005028106 հաշվեհամարին, ինչպես նաև տուժանքի մասին համաձայնագրերով 4-րդ չափաբաժնի համար սահմանված գումարներից որպես որակավորման ապահովման գումար՝ 900,000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամը և պայմանագրի ապահովման գումար՝ 600,000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամը փոխանցելու համար ՀՀ ՖՆ գործառնական վարչության համապատասխանաբար N 900008000698 և N 900008000664 հաշվեհամարներին:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ՆԳՆ, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, «Ալեռտո» ՍՊ ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Տ. Ենոքյան

Ստորաբաժանում՝ Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ գլխավոր մասնագետ Լ. Սահակյան
Հեռախոս՝ 010 59 60 21